Ուրիշ խօսքով՝ Հայաստանի սահմանները մէկ մասով ընդհանուր են անդրկովկասեան երկիրների հետ, որոնց հետ նա կապուած է խորհրդային — դաշնակցային կապերով, իսկ բոլորն էլ միասին առած՝ Խորհրդային Միութեան հետ: Միւս մասով մեր երկրի սահմանները ընդհանուր են պետականօրէն բոլորովին անկախ քաղաքական երկու միաւորների հետ— Տաճկաստանի եւ Պարսկաստանի:

Այս վերջինը այդ տեսակէտից դրեթէ հաշուի առնելու չէ, այնչա՞փ աննշան են մեր ընդհանուր սահմանները, (Զանգեզուրում, Երասխ գետ), եթէ միշեւ իսկ նկատի չունենանք այն պարագան, որ նրանք անդամ անմիջական հաղորդակցութեան ընդհանուր միջոցներից զուրկ են, գտնուում են նրանցից դուրս:

Պարսկաստանի եւ Հայաստանի ընդհա՛ն սահմանների մէջ մտնող Նախիջեւանի շրջանն էլ, դիտենք արդէն, մեր երկրի պետական—վարչական կազմից խլուած է, որով մենք փաստօրէն զատուած ենք Պարսկաստանի անմիջական հարեւանութիւնից:

Այսպիսով՝ Տաճկաստանը մնում է այն միակ անկախ պետութիւնը, որի հետ ընդհանուր սահմաններ ունինք Ախուրեան եւ Երասխ գետերով, եւ որոնց այն կողմը անմիջապէս ընկնում են Կարսի ու Կաղզուանի շրջանները եւ Սուրմալուն: Անդամ Մասի՛սը գտնուում է ներկայ Հայաստանից դուրս:

Քաղաքական տեսակէտից անկարեւոր պարագայ չէ նաեւ այն, որ մինչեւ անդամ Նախիջեւանի ինքնավար հանրապետութիւնը — անմիջապէս կամ միջնորդապէս, այս կամ այն չափով,— Տաճկաստանի՛ փաստական ազդեցութեան տակ է գտնուում: Ասել պէտք չէ արդէն, որ բուն Ռուսաստանի հետ մենք հեռաւոր կերպով իսկ հարեւանութիւն չունինք, քանի որ մեր եւ նրա միջեւ ընկած են ոչ միայն Ադրբէջանը եւ Վրաստանը, այլ եւ, վերջինների ու Ռուսաստանի միջեւ, Դաղստանը եւ Հիւսիսային Կովկասի լեռնական ժողովուրդների բազմանուն եւ բազմազան հանրապետութիւնները:

Միայն Վրաստանն է, որ հիւսիս—արեւմուտքից, Սեւ Ծովի եզերքին, անմիջապէս սահմանակից է բուն Ռուսաստանի մաս կազմող Սեւ—Ծովեան երկրամասին, եթէ միայն՝ սրա եւ Վրաստանի միջեւ տարածուող Աբխազիան (Սուխումի շրջան) հաշուելու լինինք Վրաստանի անբաժան մաս:

Իր արդի սահմաններում, ասացինք, Հայաստան դրաւում է շուրջ 30,000 քմ. (26,555 քառ. վերստ) տարածութիւն: Նա բաժանուած է հետեւեալ ութը գաւառների եւ մէկ շրջանակի (գաւառակ): 1. Երեւանի գաւառ, 2. Էջմիածնի գ., 3. Լենինականի (Ալ-Պոլի) գաւառ (Շիրակ), 4. Փամբակ-Լոռիի գաւառ, 5. Դիլիջանի գաւառ, 6. Նոր-Բայազէտի գաւառ, 7. Դարալագեազի գաւառ, 8. Զանգեզուրի գաւառ եւ 9. Մեղրիի գաւառակ (շրջանակ):

Սրանցից Փամբակ-Լոռին, Դիլիջանը, Նոր-Բայազէտը ամբողջովին կամ գրեթէ ամբողջովին լեռնային շրջաններ են: Այնտեղ հնարաւոր է միայն համապատասխան տնտեսութիւն — անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն, մեղուաբուծութիւն եւայլն: Երկրագործութեամբ թէեւ զբաղւում է ժողովուրդը, բայց սակաւ արդիւնք է ստանում դրանից: Լենինականի գաւառը թէեւ մեծ մասով հարթավայր է (Շիրակ), բայց ծովի մակերեւոյթից խիստ բարձր (միջին հաշուով 5,000 ոտք), դրա հետ միասին դարերի ընթացքում հողը յոգնած, ուժասպառուած լինելով՝ դարձեալ սակաւ արդիւնաբեր է: Կլիմայական պատճառներով երկրագործութիւնից եւ մասամբ էլ անասնապահութիւնից ու յարակից զբաղումներից դուրս՝ ուրիշ տնտեսութիւն գրեթէ չէ վարում մեր ժողովուրդը:

Մնում են ուրեմն Երեւանի ու Էջմիածնի գաւառները եւ Մեղրիի շրջանակը, որոնք մեծ մասով դաշտային լինելով եւ տաք կլիմայ ունենալով՝ ընդունակ են զարգացնելու ո՛չ միայն հացաբոյսերի մշակութիւնը, այլ եւ արտադրելու բամպակ եւ ծխախոտ, ինչպէս նաեւ կարեւոր տեղ յատկացնելու այգեմշակութեան եւ յարակից զբաղումներին: Սրա հետ մէկտեղ մոնալու չէ սակայն նախ այն պարագան, որ ա՛յդ գաւառների էլ մէկ մասը դուրս է գուտ դաշտային գօտիից (Արարատ եւն.) մէկ էլ այն, որ այս գօտին ինքնին չա՛տ փոքր տարածութիւն է գրաւում, որով եւ խիստ սահմանափակ է նրա տնտեսական բացարձակ նշանակութիւ-